

լորն էլ անհետացել են, սակայն իսրայէլը իւր Սիօնն ու Երուասիզմը յիշելով՝ ոչ միայն առ գետս բաբելացւոց, այլ և հռեհսսի եղերքներում, գանգէսի ավերում, կենդանի է մնացել։ Եշովայի հայրենի Աստուծուն, հայրենի դաւանած կրօնն ու սրբութիւնքը չէ մոռացել նա, ուր որ էլ եղել է։ Այս կողմից նա պատմութեան համար նոյն խոկ մի անբացատրելի երեսյթ է գեռ ևս։ Այսպէս մենք ևս, սիրելիք, մեր Սիօնը. մեր Երուասիզմը, մէջ Ս. Եջմածինը, սուրբ Գրիգոր Լուսաւորչի հաւատր, հայրենի տաճարներն ու սրբութիւնքը, աջն ու խաչը, սեղանն ու խորանը չմոռանանք։ Խնչպէս ամենայն մի բարեպաշտ հրէի պարուք էր գոնէ պասեզի տօնին տաճար գնալ, այսպէս թող ամենայն հայ գէթ իւր կեանքի ընթացքում՝ իրոն սուրբ պարտականութիւն համարէ այցելել այդ սուրբ վայրը և նորա սուրբ հայրապետների՝ «օրհնութեամբ օծուած քարերը համբուրել» նրբ մենք ևս այսպէս կվարուենք, այսպէս կյուսանք և կհաւատանք, այն ժամանակ Աստուած մեզ ևս կընդունէ ի շարժ ընտրեալ ազգի և տէր կլինի, ինչպէս որ ինքը խոստացել է իւր պատուիրանի մէջ «ես եմ Տէր Աստուած քո»։

Տէրէն.

ԱԱՀԱԿ ՔԱՀ. ԱԱՀԱԿԵԱՆՑ.

ՊԱՏՄԱԿԱՆ

ՆԿԱՐԱԳԻՐ Ս. ՅՈՎՃԱՆՆՈՒ ՎԱՆՈՒՑ

ԵՒ

ՎԻՃԱԿԻ ՆԱՐԻՆ ԲԱԳՐԵՒԱՆԴԱՑ,

(Շաբանաւունիւն)

Ժ.

Որպէս զէնքը բոնաւորին ձեռք յաջող գործիք մի է, իւր չար նպատակն ի յանգ ածելոյ, այսպէս և, երբ պաշտօն մը կը

յանձնուի այնպիսւոյ մը, որը չարաչար կը վարէ զայն՝ յօդուտ անձին և ի վնաս հասարակութեան:

Արդ քիւրդ Յոլչաննէս եափսկոպոս իւր առաջնորդական իշխանութեան օրով վանուց մէջ եղած դուզնաքեայ կարգ և օրէնք որ մնացեալ գոյր յառաջնոց անտի՝ կորոյս: Ալ ոչ փառք ու պատիւ մնաց ծերոց, ոչ շուք ու շնորհ վարդապետութեան, ոչ համեստութիւն սարկաւագաց, ոչ ուսումն դպրաց և ոչ ևս բարւոք կառավարութիւն ինչ վանուց և աշխարհականաց. ալ ախտամոլութիւն ու շահամոլութիւնը իրենց վերջին ծայր կատարելութեան հասած էին: Կադ ու կոիւ, հայոցյանք, զըրպատութիւնք և բամբասանք իրենց հանապազօրեայ զբաղմունքն էր դարձել:

Որպէս վարձկան հսկիւ չէր նմա փոյթ զվանաց և զմիաբանութենէ: Այրիացեալ մենաստանի դրամարկով գրաւելով՝ նորա եղած չեղածը ծանել կընկրտէր իւր դատարկ քսակը լեցնելու համար: Արժանաւոր միաբանները իւր իշխանական եղծերը կը վանէր. անարժանները յառաջ կը կոչէր: Գտմ քան զգամ փորը կշտանալով՝ մոռցաւ իւր բարերարները, մոռցաւ Արէլ վարդապետ և իւր համայն սիրելիք: Իւր կեղծ ու պատիր սէրը մինչ այսաեղ էր. իւր նպատակին հասնելէ վերջ, ալ ոչ ոքի պէտք չունի:

Աստի ծագեցաւ երկու հակառակ կուսակցութիւնք՝ Յոլչաննէսեան և Գալսւստեան: Խոկ Արէլ վարդապետ ոչ մի կուսակցութեան պատոկանեցաւ մինչեւ վերջ յարելով միոյն կամ միւսոյն կողմ: Պէտք է ասել նա հաստատ գաղափարի, սկրզբունքի տէր մէկը չէր, որ կողմէն բարեյաջող հովը վչէր, այն կողմը կանցնէր. ուստի մերժ այս, և մերժ այն կողմն էր: Արդեն տիրապետող չար նախանձն և կոյր կիրքը թոյլ չէին տար իրեն ճշմարտութեան վերահասու լինել: Գէթ իւր շահուց և անցաւոր փառաց զինք նուիրելով՝ իւր ըստանձնած սուլը կոչման համաձայն չկարողացաւ Հայաստանեայցս Ս. եկեղեցւոյ ... ծառայել, վասնորոյ յումպէտս կօրեաւ զերդ զվասակայն:

Վասն դի մի օր այս տիսուր անցքերէն ետեւ Յովհաննէս եպիսկոպոս ցանկալով միաբանից ոմանց գրաւել, ոմանց որոսալ՝

յառաջնորդարան զանազան խորտիկներով և ոգելից ըմպելեօք լի մի սեղան զարդարեց, ուր հրաւիրելով զնոսա, իժամ զրուցատրութեան կէս հեգնաբար—թէ և սոսոյդ—Արէլ վարդապետ առաց նմա «Սրբազն», ուր է 20 քսակ դրամն զոր առաջնորդութեանդ յաջողեցնելուն խոստացար ինձ նաև երկու բեռ խիլայս վամն իշխանացն, որք կամեցան քեզ լինել իւրեանց առաջնորդ։ Արդ ուր է զայնս, տուր, որ բաժանեմ յուսադրեալ իշխանացն։»

Ընդ այս սաստիկ սրտմտեալ Յովհաննու, յետ ընդ երկար բանակուր լինելոյ՝ գուրս ըրաւ զնա սեղանի վրայէն։ Այս պատճառաւ դարձեալ աւուր մէկ ընդ նմա հաշտուելու պատրուակաւ, կոչեց զայն առ յինքն և ի ժամ ընթրեաց բաժակաւ թոյն խառն ընդ գինւոյ տուաւ նմա ըմպել։ ուստի հիւանդանալով ընկաւ անկողին։ յետ դոյդն ինչ ամառնակաց վախճանեցաւ, չվայելելով օր ու արև, որ տակաւին յարբուն հասակի սպասէր նմա։ Սրբակրօն Սողոմոն, Թոմայեան և Յակոբ վարդապետներն բանտարկեց. բոլոր միաբանից անուսումն գուեհիկ անուանելով՝ խնդրեց Ս. Էջմիածնայ հոգեոր իշխանութենէն որ ի միաբանից Մայր Աթոռոյն ուղարկեն նոցա տեղ, որոց փոխանակ խոստանայ զայլս յզել։

Վանուց բանջարանոցի բոյսերը կրվաճառէր միաբանից, որ մինչեւ այն ժամանակ եղած ու լսուած բան չէր, մի վարունկը 15 փողոյ, 2 սոխ 4 փողոյ և այլն։

Առաւել քան զկար ջանայր, որ Գալուստ և Սիմէօն վարդապետաց բազմավաստակ կենաց վրայ սև վարագոյր քաշելով աքսորէ զնոսա, ըստ հաճոյս սանձարձակ գործելոյ աղագաւ, զոր առ խարկանօք մի օր մելիք Գալուստն և այլ ինչ իշխանք առնելով ընդ իւր գնաց իբր ցտեսութիւն պոլկովնիկոյ ուսու զօրապետին, որ Ղումիհճայ գիւղը կըկենար զօրականօքն հանդերձ։ Ուր մի կեղծ գրութիւն հանելով ծոցէն մատոյց նմա, ասելով որ կաթուղիկոսէն եկած է իրեն, որով հինդ կօզակ խնդրեց շնորհել իրեն, որպէս զի Գալուստ և Սիմէօն վարդապետներն կարողանայ նոքօք յզել ի Ս. Էջմիածին։

Որով մելիք Գալուստն, մելիք Ղազարն, մելիք ներսէսն, Պետ-

րու տղայն և այլ բազումք բարկանալով ընդ այս, յայտնեցին նմա թէ—այլ ես չեմք ուզեր երբէք, որ մնաս ի մեր վանքն սոյնափիսի անվայել ընթացիւք. քանզի կարի յոյժ ձանձրացեր եմք և տաղտկացեր քո չափազանց անհամութիւնովդ:

Վասն որոյ գօրապետն անտես առնելով նորա ինդիրը, երես դարձնելով, դուրս եկաւ անտի: Գումարեալ միաբանք պատեհ առիթ գտնելով՝ վիճակայնովք հանդերձ առաջնորդին անտելի վարմունքն պարունակող մի հանրագիր պատրաստելով՝ յղեցին զայն Ա. Եջմիածնայ հոգեոր իշխանութեան, ոյր աղաքաւ Ց. Միքայէլիսան հանճարառատ Նուկաս վարդապետն առաքեցաւ յիւշ-քիլիսէ վանքն. ուր զկնի կանոնաւոր և անաչառ քննութեան ըստ ամենայնի պարտաւորեալ գտաւ զկողմն Յովհաննու, որից դուրս եկած արգեանց հետ առնելով ընդ իւր զգեր. Գալուստ և Սիմէօն վարդապետքն և Յովհաննէս եպիսկոպոսն վերադարձաւ ի Ա. Եջմիածին:

Ի վերայ այսր ամենայնի Յովհաննէս եպիսկոպոս դարձեալ ձեռնութայն չելաւ վանքէն, նա 13000 մարզի (դուրուշ) գողանալով՝ առարաւ իւր հետ:

Անդ ի Ա. Եջմիածին կրկին քննելով գտին և նոքա զկողմն Յովհաննու պարտաւորեալ. որ ըստ յանցանացն դատուելով գրեցին հաստատեցին զվճիռ հատուցմանն, ի տեղի նորա նշանակելով իւշ-քիլիսէ վանուց և վիճակի նորին Բագրեւանդայ վանահայր և առաջնորդ զԳալուստ վարդապետ, զնա ինքն Յովհաննէս եպիսկոպոս աստիճանազուրկ ընելով՝ աքսորեցին ի վանս սրբայն Յակովը այս կը յայտնէ, որ ի Յարկուուի. որ ինչպէս ալ յետագայ դատավճիւր կը յայտնէ, զոր բնագրէն առնելով իսկութեամբ դրոշմեցի աստէն:

—Վերահասու եղեալ իրաւացի վճռատուութեանս և բարեհաճեալ հաստատեմ իսկական կնքով և ստորագրութեամբ մերով.

Կաթուղիկոս ամենայն Հայոց Եփրեմ:

Խւրոյ Սրբազնակատար օծութեան

և Սիւնհոդոսական կառավարութեանէ

Ամենախոհարհ յայտարարութիւն

Սոյն թիւ սեպտեմբերի 23, ի կառավարութեանէս առաքեցաւ Նուկաս վարդապետն Տէր Միքայելեան, յիւշ-Քիւիսայ Սուրբ Յովհաննու վանքն խնդրագրովք տեղույն նորոգ գնացեալ առաջնորդ Պայազմոցի քիւրդ կոչեցեալ Յովհաննէս եպիսկոպոս գրագրի, իբր թէ վանացն միաբանք ապստամբեալք յինքենէ առաջնորդէ, բարձեալ են յեկեղեցւոյ զյիշատակութիւն անուան կայսերութեան ոռոսաց, և նոյն իսկ առաջնորդի, և կալանաւորեալ զինքն ի սենեկի իւրում, և այլ սոյնառարաս ամբաստանութիւնք գրեալ ի յիշեալ եպիսկոպոսէ զմիարանից իւրոց։ Վասն որոյ Սիւնհոդոսական կառավարութիւն յուսալի զգուշութեամբ առաքեաց զյիշեալ Ղուկաս վարդապետն, որ արդարապէս վերահասու եղեալ խրատեսցէ զմիարանութիւն ի հնազանդութիւն առաջնորդին, և զվրդովիչն նոցին ըստ գրութեան առաջնորդին, զԴալուստ և զԾիմէովն վարդապետո թէ կամայ և ակամայ բերցէ ի Ս. Աթոռու։ Որոյ վասն գրեցաւ և կողմանց գերազանց ենարալին, ի հարկաւորին օգնեսցէ Ղուկաս վարդապետին։

Եւ յիշեալ Ղուկաս վարդապետն գնալով անդ, պահպանէ զանաշառութիւն և զխոհական կառավարութիւն, մինչ երեք օր ոչ թողլով առ ինքն երթեւեկութիւն յառաջնորդէ և ի միաբանից։ և ապա հանգէս արարեալ ի ներկայութեան առաջնորդին զիւրաբանչիւրոց ասութիւնն յատկացեալ թղթով ժողովեալ, որք եղեն քսան երկու հատուածք, բաց յառաջնորդի երկու հատուած գրոցն, ամեննեցուն միտք և վկայութիւնք զհամեմատ ենթակայս շօշափեն, որք են հարստահարութիւնք միաբանութեանց, յորդորումն զլուսարար նոցին գաղել զինչս եկեղեցւոյն յայլ տեղի. անվայել իւրում պաշտօնի շրջել զինակրութեամբ ի մէջ վիճակացն, թոյլատրութիւն Մինաս սպասաւորին իւրոյ անհանգիստ առնել ի վանս ժողովեալ զգաղթական ժողովուրդսն վիճակին. յարգասեաց պարտիզի վանուցն

ա՞սովոր վաճառել նոյն միաբանութեանց։ Ի կոչունս գտանեցեալ կողմանցն պօլկովնիկի ագահող գտանի դրամոց կոչողին, զոր նախատանօք հանդերձ վերագարձուցանէ յետոյ։ Զարէլ վարդապետ բարերարն իւր որ յառաջնորդէ շարագրեալ մահսերագրութիւնն իբր իսկ վիճակի կամեցողութիւն առաքեալ էր աստ, գտանի կարծիքական պատահմամբ բարձեալ ի կենաց։ և զՄիւնհողոսական հրամանագիր որ խնդրանօք առաջնորդին գրեցեալ էր ի կոչումն Գալուստ և Սիմէօն վարդապետաց ի Ա. Աթոռն վասն քննութեան, փոխանակ հասուցանելոյ ինքեանց, իբր շնորհուկս եղեալ նոցա, յատենի հոգեորականաց և աշխարհականաց տեղւոյն պատառէ, որպէս թէ ի կամս իւր է զայնպիսին ներգործել. առանց իրաւացի պատճառաց գրէ բանադրանս երեելի անձանց կողմանցն։ Այս համառօտութիւնք յատկապէս տեսանին ի մէջ վկայական յիշեալ թղթոյն։ Բայց ամբաստանութիւնք առաջնորդին ընաւ չէ գրեալ զիրաւունս, զի ոչ զկայսերական անուն են բարձեալ յեկեղեցւոյն և ոչ զինքըն կալանաւորեալ, աւելորդ բանք են. առաջնորդին ի վերայ միաբանութեան։

Վասն որոյ, Սիւնհողոսական կառավարութիւն բաց յանդամակցաց իւրոց, ներկայացոյց յատենի քննութեան զայլս և չորս արք-եպիսկոպոսունս և զհինգ վարդապետս որբոյ Աթոռուոյս, որք յայտնին ստորագրութեամբ իւրեանց աստ, և ներկայացուցեալ առաջնորդն հանդերձ ամբաստանեալ Սիմէօն վարդապետիւ մի ըստ միոջէ զամենայն թերթսն ի Ղուկաս վարդապետէ ժողովեալսն, յատենի ամենեցուն ընթերցեալ, և արձակեալ զյիշեալ առաջնորդն և զամբաստանեալ վարդապետն ի ժողովոյն։ Ապա քննեալ զսրբազան կանոնադրութիւնն հարցն սուրբ եկեղեցւոյ և գտեալ զառաջինն թէ՝

«Եպիսկոպոս բերեալ թուղթս ի մէջ յայլ վիճակաց ժողովրդենէ, որոց զոմանս վարելով և ոմանց աղերս ակնարկելով իբր զինքն խնդրեսցեն առաջնորդ, այսպիսի խորամանկութեամբ յափշտակողն զվիճակ, և ոչ ի վախճանի արժանի իցէ ընդաշխարհականաց հաղորդիլ. Սարդիկոյ ժողովոյն Բ. գլուխն է գրեցեալ։»

«Եպիսկոպոս բռնացեալ ի վերայ եկեղեցւոյն աշխարհական իշխանօք, լուծցի. առաքելոց կե. գլուխ, ժողոված կանոնք ի ե. գլուխն է.»

«Եպիսկոպոս գողտ լուծցի առաքելոց կ. գլուխն է.»

«Եպիսկոպոս, գտեալ ի զազիր գործս, ոչ կարէ կալ ի պաշտման մինչեւ ցվախճան. Գրիգորի աստուածաբանի ի Գ. գլուխ և հայոց կանոնի Ա. գլուխն է.»

«Եպիսկոպոս, գտեալ յանցանս ինչ, դատեսցի յիւրում գաւառի եպիսկոպոսաց, այլ մի ևս իշխեցէ առաջի ուրուք դատխոսիլ. Անտիռքա ԺԴ. և ԺԵ. գլուխ և Մխիթարայ ձկ գլուխն է.»

«Եպիսկոպոս, եթէ զպահս լուծցէ, նզովեալ եղիցի. Երկրորդ ժողովի ԺԷ. գլուխն է.»

«Եպիսկոպոս, զինչս եկեղեցւոյն գաղեցեալ, մի կեցցէ. առաքելոց ՀԳ. ՀԶ. գլուխ. Բ. Նիկիոյ Զ. գլուխն է.»

Արդ այսգիւք որբազան հարցն կանոնաց զօրութեամբք մարդասիրաբար ի փրկութիւն հոգւոյ յիշեալնոր Յովհաննէս առաջնորդի, իրաւունս համարեցաւ սուրբ Էջմիածնի Սինոդական կառավարութիւն համագումարեալ սրբազան հարբք, որ այսպանեաք յանցուցեալ եղայրն մոնոզոնական պատուով վեց ամիս ժամանակաւ գնացեալ Յարկուուոյ Ա. Յակովբայ վանքն, յօրն երկու կանոն Սաղմոս, եօթն գլուխ Նարէկ, մէկ ձայն ապաշխարութեան Շարական ողորմեայսն, և հինգ շաբաթի աւուրն պահօք երգելով խնդրեցէ զամենակարող ողորմութիւնսն Աստուծոյ, որ այսպիսի անլսելի գայթակղութիւն արկեալ էր ի մէջ միաբանութեան յիշեալ վանիցն և բարեպաշտ ժողովրդեան. Յետ կատարման սոյն ապաշխարութեան, միայն զպատիւ արեղայութեան ունիցի, և մի կրեսցէ ի կեանս իւր զթագ, զեմիկորոն և զմատանի, զի արգելեալ է յեպիսկոպոսական պատուոյ և յիշխանութենէ, մի մտցէ ի միաբանութիւն Ա. Էջմիածնի. այլ ի լրանալ սահմանագրեալ ժամանակին Սիւնհոգոսական կառավարութիւն յատկացուցէ վասն նորա մասնաւոր վանք մի, կալ միաբանական պաշտօնիւ միայն, զի և խրատ լիցի այլոց հոգեորականաց զգուշանալ այսպիսի անտանելի գայթակղու-

թեանց։ Խսկ, եթէ յապաշխարութեան վեցամնեայ միջոցին պատահեսցի նմա հիւանդութիւն հաղորդեսցի միայն որպէս սոսկ մոնողան կամ ապաշխարութ.ի ձեռն քահանայի։ Խսկ յետ լրութեան ապաշխարութեան, այնուհետեւ պատարագեալ ինքնին և ճաշակեալ։

Վասն որոյ, մատուցունի սոյն վճիռ ձերդ սրբազնակատար օծութեան ի վերահայեցողութիւն և ի հաստատութիւն, որով կարասցէ հրատարակել ուր հարկն է։

1829 նոյեմբեր 28.

իյատենի խորհրդարանի։

Տեղապահ Մարտիրոս Արք-եպիսկոպոս, Սահակ Արք-եպիսկոպոս, Փիլիպպոս եպիսկոպոս ժամօրհնող, Ստեփաննոս եպիսկոպոս, Մանուէլ վ., Վեհապետեան Յովսէփ վ. Յակոբ եպիսկոպոս Կոնդեցի, Գրիգոր եպիսկոպոս Արքութինցի Բարաջանով, Ստեփաննոս եպիսկոպոս տեղապահեան, Սուքեաս վ. Կարնեցի, Դուկաս վ. Ցէր Միքայէլեան, Յովհաննէն վ. Հիւրընկալ, Գէորգ վ. Տաթևացի, Դիոնէսիոս վ. Նօտար։

ԺԱ.

Մինչ Պասկեիչ Կարնոյ գծին վրայ մեծամեծ ճակատամարտ-ներ կը մղէր օսմանեան դէմ, յայսկոյս չարագոյն քան Թամուր-լանդ համանուն Վանայ Թամուր փաշան Կորդուացլերանց ճա-նայուած քրդական այրուձին, Ռշտունիաբնակ և զգաւաշա-կեաց հագարացիս ընդ հուպ զանազան խրախուսանօք հաւաքե-լով ընդ ձեռամբ որպէս վիրաւոր արջ գուրմ սողաց իւր որջէն նոքօք հանդերձ արշաւեց ի վերայ Պայազիտու, որպէս զի բեր-դագաղաքն առնելով ի Ռուսաց անխորի զօրքն և նորա ոչ մահ-մետական բնակիչը ընդ նոսին կոտորելով՝ առատաձեռն ճոխ աւարաւ յետ ընդ կրունկ յաղթութեամբ դառնայ ի Վան։

Նա սոյն խորհուրդն ի կատար ածելոյ համար առաջնորդ-գոտաւ իրեն Պայազիտոցի Խւնուղբէգեան Թամուր բէկի որդի օձաշունչ Սաղըզ բէգ, որ ի 1830 — ի քսանումէկն յունիսի ընդ արշալոյսն առաւօտուն առնելով նոցա բերեց քաղաքի վե-րայ, որն որ չորս կողմէն պաշարելով՝ անդ ի միջի սաստիկ

կորիւ մը տեղի ունեցաւ ձեռնտուութետմբ տեղացի մաս մը բնակչաց. մտնելով աւելին քաղաքի վերի մասն, ուր Յ թնդահօթ առնելով ուսւս ռազմիկներէն, 40 թնդանօթաձիգս ի նոցանէ կոտորեցին:

Այս ատեն քաղաքի հայ բնակչաց թիւը թէեւ լաւ չեմ յիշեր, սակայն նորա բնակչաց ընդ ազօտ քանակութիւնը ցոյց առաջու համար այսքանը յառաջ կրբերեմ որ իրենց պաշտպանութեան համար 3000 կարիճ հրացանաւորք սուր ի ձեռին, իրեւ ամուր պարիսպ կեցած իւրեանց տանց շուրջը կը հսկէին, թոյլ չտալով աւարառուաց մերձենալ իրենց։ Պատերազմն երթալով իրբեւ համաճարակ հրդեհ՝ կրզօրանար. վառ արեն ի մուտքն խոնարհելով՝ հրազինուց անդրագարձումն իրեւ ի միջօրէի կը լուսաւորէր զքաղաքն, որ նման լաստափայտի մը ալէծուփս տատանի ի վերայ լեռնակոհակ ջուրց ծովու։

Ի նկատի ունենալով սոյն քաղաքի գրութիւնը՝ ուրեմն այս ընդհանուր հոսանքէն զերծ չէին կարող մնալ հայ ընտանիք։ որքան ևս իւրեանց երիտասարդք թշնամւոյն դէմ դնէին։ Յայնժամ սուրն ու հրացանը ինչ դեր որ կրիսաղար. բիւրտուր ընչաքաղց արիւնուուշտ աւազակաց երկիւզը նոյնը կազդէր նոցա մէջ։ Ամեն տան դուռ գոց էր, լուսամոււսներէն հանդիսատես կը լինէին՝ լսելով պատերազմի մէջ ընկնողների մունչիւնը և գիշականց թաւալուումը. ողջ քաղաքը սգոյ տուն էր դարձած, ամեն մարդ իւր արե կողբար։

Երկու օր տիւ և գիշեր պատերազմելով՝ քրդական բանակն յետո նահանջեց, որք գնալով իւրեանց բուն բանակետղը Դազի-գի-գոլ (Յոր դատաւոր) վերստին զետեղուեցան ընդ վրանօք։

Այս վիճակի մէջ մինչ նոքա յաճախ օգնութիւն կը խնդրէին իրենց յամենայն կողմանց, նօթութենէ դուքս արձակուած քաղաքի անասունքն զեւ արօտասեղ չհասած, վրայ կը յարձակուէին անձամբ անդէսրդներն ու խաշնարածներն զլիսատելով՝ կը յափշտակէին, սովելու գալերի նման կը լափէին, արգելելով տեղոյն ել ու մուտք. Բայազիսի հայ սպանելոց թիւն է մինչ ցարդ 64, Արծափ աւանինը՝ 7, քանզի վերջինքն ևս իրենց քանի ինչ գիւղօրէիւք փախեր ապաստաներ էին Մասեաց մեծ

սարի արևելտեսն կողմն գտնուող ԶԵԳԵՆԼՈՒ գոլ առձայնեալ լեռնաշղթայի կատարը՝ յիշեալ Թամուր բէգեան Սատըլ պէյ 3000 հեծելազօրքով ուղարկուած էր նոցա վրայ որք երեք օր քաջաբար պատերազմելով նորա դէմ՝ ուլ մի անգամ չետուն նմա:

Մինչեւ որ Կարնոյ յուլիս 4 ին առման լուրը վերջ տուաւ այս յուսահատ վիճակին, որով պատերազմի — աւարաւութեան դաշտը թողնելով քիւրդք հեռացան մեծամեծքն ի Վան, մնացեալքն ի լերին և ի քարանձաւս:

Վերոյիշեալ Պայտպիտի կալանաւոր 13 հայ իշխանքն որ Կարին, արձակուելով վերադարձան առ ընտանիս իւրեանց ողջամբ, բացի Սիլունեան մեծահարուսա Ասլան և մահտեսի Դրիգոր աղայից, որք բանտի մէջ կնքեցին իրենց մահկանացուն և թաղեցան անդէն ի գերեզմանատան հայոց Կարնոյ, վերհամբառնալով ի բնագաւաւսն կենդանեաց առ աենչալին իւրեանց Քրիստոս:

Այնուհետև յառաջացան գունդ գունդ աւազակաց խմբեր, որք որպէս մորեիս ցրուելով հայ գիւղօրէից մէջն ու նոցա սահմանները՝ Բագրեանգայ, Կարնոյ, Տարօնայ, Սալնոձորոյ, Վասպուրականի և ի մասնաւոր տեղիս ինչ պարսկահայոց զրկեցին յամենայն ընչից և ստացուածոց, առեւտնգեցին զգեղատեսիլ հարսունս և աղջկունս, զոմանս գերի վարեցին յանդարձ օտարութիւն, անմեղ սպաննելոց արիւնով ներկեցին նոցա յարդածուկ խրճիթներն ու ծաղկաւէտ դաշտերն:

Սուրբ Եկեղեցիների համար խօսք չկայ, նոքա ամենքն ալ վաղուց արդէն կողոպտուած, քանդուած էին:

Ոչ միայն վրանաբնակ քիւրդքն առնէին զայս ամենայն, այլ նաև նոցա առաջնորդ տեղակալ պէյ յերն և փաշաներն իսկ: Ոչ միայն երկուց տէրութեանց հոգածութենէն դուրս ընկած սոյն հայաբնակ գաւառաց ոչ-մահմետական տարերքն ենթարկուած էին ազգի ազգի տառապակրութեանց և վշտաց, այլ նաև նոցա պերճ ու ճոխ վանորայքն միանգամայն:

Նման Ս. Երուսաղէմայ գերութեան և աւերածայն ի նաբուգողնոսորայ, Հասանանցի ցեղի քրդերն որպէս վագր գազան

յարձակելով Մշոյ Ս. Կարապետի վանուց միաբանութեան վրայ ցիր և ցան ըրին, յափշոակեցին նորա ամենայն ինչքն և անասունք. աւերածոյն ծուխն ու մուխը ծածկեց երկին. Անաի գէթ Պետրոս վարդպ. առաջնորդ տեղւոյն գազտագող հանդերձ միաբանօք սմամբք առնելով մասն ինչ տաճարի սուրբ սպասուց և յանօթոց գնաց գէպ ի Մուշ, որ ճանապարհին էմին փաշայի հրոսախմիին պատահելով՝ այն ալ թողուց նոցա իրը գինք արեան, որ փախնելով իւրայնովք հանդերձ մազապուր անկան ի տուն Քօթանեանց Բարիսէի, ասպնջական լինելով նոցա յրմասանց ի ձեռս էմինայ, որ քանիցս անգամ պահանջեց ի նմանէ առ ի սպանանել զՊետրոս առաջնորդ, որով յետ աւուրց ինչ փախուց ի Կարին:

Աստ մնալով նա ցվերջ հաշտութեան, Կ. Պօլսոյ Կարապետ պատրիարքի միջոցաւ այդ մասին մի բողոքագիր մատոյց Բ. գրան, որով յիշեալ վանուց կողոպուտներէն $\frac{1}{5}$ գուցէ յաջողեցաւ վերագարձնել իրեն. ոյր աղագաւ այլ ևս առ ահին աւազակաց յիշխեց ոտք կոխել այնոտեղ, այլ կամաւ իւր պաշտօնն թողով Մարտիրոս անուն եպիսկոպոսի մը, որ տեղւոյն քանի մը փախստական միաբաններով ուղարկուեցաւ յիշեալ վանքը: Իսկ մնացեալ միաբանքն կրակի բովէն դուրս գալով՝ այն օրէն փախսեր իրենց վերջին շունչն ի յԱշտարիսան առեր էին, ուր և մնացին նոքա տարաբնակք գոլով՝ կարօտ ի հայրենեաց: Արպէս և նոյն Մշոյ Մատրավանքը իսպառոսպուռ կողոպտեցին, հերկեցին հիմը արել հանեցին, սրբազն միաբանքն որ կանխաւ իրենց ժողովրդօք ամրացեր էին այնոտեղ, անագան ուրեմն ցրուեցին, նոցա $\frac{1}{5}$ մասն գրեթէ սրով խողխողեցին և զբազումս վիրաւորեցին. Վաղարշակերտոցի Մարկոս վարդապետն անդէն անդ առ գրան սուրբ տաճարին փողոտեցին: Բաղիշոյ, Վանայ, Արճիշոյ, Խլաթայ և Տարօնայ միւս վանօրայքն և ս զայս օրինակ սրարին, ոյց մասին ակամայ զանց արարի աստանօր մի և նոյն բանն կրկնել, բացի Մշոյ Երկոտասան առափելոց վանքն, որ տեղւոյն գեր. Յովհաննէս վարդապետ վանահօր իմաստուն կարգադրութեամբն ազատեցաւ այդ հեղեղանման ծանօթ աւաբառութենէն:

Յետ այսորիկ վերստին յորդան տուեալ միահամուռ քրդաց յայս գործ, ի նոցանէ 1000 հեծեալ արշաւեցին ի վերայ Դիաղ-նու, ուստի զարկին, տարան նորա բոլոր անասունքն, որ զիետ լինելով նոցա տեղւոյն գաւառապետ մելիք Ոսկանը 50 հրացա-նաւորօք՝ քաջարար կռուելով ընդ նոսա սպանուեցաւ. մնա-ցեալքն դառնալով անտի գատարկ և ունայն բերին հանգու-ցելոյն գիակը, որ և թաղեցաւ անդէն մեծաշուք հանդիսիւ:

Ընդ նմին աւազակապետ շէյխերը փութով Նումիճա գիւղը լցուան, ուր սպանին առաւել քան զ20 անձինս, մօրէ մերկ թո-ղուցին, առեանգեցին Մարտիրոսեան երկու չքնաղագեղ քոյ-րեր: Տարան Գեօլասօրայ համայն անասունքն. մորթեցին, քեր-թեցին Յաղբաղարայ Դ հոգիք:

Նումիճայեցիք և եթ, ի նոցանէ մարդ մի բռնելով վերս ի վերայ եղին, որ յիշեալ երկու քոյրեր յետ գարձնելով իրր փրկանագին, զայն ևս տարին:

Խոկ ուուզք տակաւին հոգ չէին ըներ այս չարեաց առաջքն առնուլ. որ իրենց շուրջը կըգործուէր:

Գործն այսպէս զնաց մինչ նոյն ամի օգոստոս ամիսը, յորում հաշտութիւնն կայացաւ պատերազմող տէրութեանց մէջ: Որով աիրող պետութեան շնորհիւ յայտնի ասպատակներն ու բռնա-կալները հայոց ազգի մէջ գործելէ գաղթեցան:

Սակայն նորէն համայնքի մոքերն հանգիստ ու դադարում չառան, այսու նոր ասպարէզ բացուեցաւ նոցա մուաց առաջ, երկար ու բարակ մոտաւորական աշխարհի երկինքը զօրէն սրա-թուիլ արծւոյ խոյանտով կըօաւառնէին: Դաշնադրութեան զօրութեամբ գաղթականութեան թոյլտուութիւն եղած. էր. մինչ այն օր 16 ամիս կար նոցա առաջ. զօրքերն ձմերեցին թըշ-նամուց առած հողի վերայ: Ահա այդ միտքն ի պաշտօնէ հա-ղորդուեցաւ իրենց, ուստի մինչ այն ժամանակ գաղթել և չը-գաղթելու ինդիրն էր նոցա բերին առաջկայն: Այս տարակու-սութեամբ պաշարեալ երերամիտ ժողովուրդը՝ երկու ճանա-պարհի գլուխ մոլորուած ուղեւորի պէս հողմահար եղեգի նը-սան ուղ ձմեռն անցուց:

Ահաւասիկ 1831ի գարունը իբրև արագահաս սուրհանդակ մը ժամանեց։ Բնութիւնը մերկանալով իւր սպիտակափայլ քոզը, ձիւնն ու սառոյցը, երփներանգ ծաղկամբք զինչ նոր հարս ու փեսայ պճազարդեցաւ։ Այս բնութեան գեղեցիկ երգիշները թռչունք երկնից գէթ իրանց անոյշ գայլայլիկներով զմարդ կուրախացնեն, ուրիշ ոչինչ չկայ ուրախ, մի խօնարհիր յերկիր ի ստորաթող չտեսնեն քո աչքեր, բարձրը լաւէ, այսաեղաց կո՞ծ, աւերած, գեռ տեղ տեղ արեան հետքեր կընշմարուին, երկնից ցողն չէ լուացած զայն։ Ոմանց սպանուած տեղեր քարակարկառներ բարձրացած են. նոցա երեակայական ուրուականը իսաբուսիկ աչօք անցորդը կը սարսափեցնէ, որ ըստ սովորութեան մի քար ձգելով նոցա միոյն վրայ կանցնի։ Երկիւղալից ազգաբնակութիւնը ահարեկուած դուրս կելեն այնուեղէն իրենց ազգականաց շիրմաց վրայ մի կաթիլ արցունք թափելով կուղեռին յուշիկ իրենց մօր գրկէն դուրս երթալ։

Սոյն միահամուռ ճիւաղ գաղթականութիւնը շարունակուեցաւ մինչ նոյն ամի յունիս 8։ Այս բազմամարդ, հայարնակ գաւառը իւր ստորին վիճակօք աւեր և ամայի դարձնելով չուեցին, մեկնեցան անտի իրենց գաւառապետ մելիքօք..., զետեղուեցան յարքունուստ նշանակեալ ուռւսապատկան սոյն այս տեղիս՝ Արմենագած լերան հովասուն ստորատները, նիդ (Ապարան) գաւառակը, Շիրակաւան, Տաղկոցաձոր և ի գեղարքունիս։

Թէպէտե կային ի թիւս նոցա այնպիսիք ալ, որք չկամէին գաղթել, նոցա ևս մելիք կոճոպեցին, զբազումն բռնի վարեցին ընդ իւրեանս յանդարձ օտարութիւն. ինչպէս վերջին Արևելեան պատերազմին տեսնուեցաւ։

Այդ գեղեցիկ ընդարձակ գաշտավայրին մէջ, որի տեերումը աննկարագրելի է, թխսամօր նման միայն նստած մնաց պատմական Զիրաւ գաշտի արևմտեան կողմն՝ սրբազան Եփրատի մօտ, նպատ լերան ստորոտը՝ Ա. Գրիգոր Լուսաւորչին Տրդատ թագաւորին... մկրտած տեղը առձայնեալ յանուն Ամինասուլրբ երրորդութեան կառուցեալ Խւչ-քիլիսէ Ա. Յովհաննու վանքն իւրեան ապաստանող իւրապատկան 184 տամբք գեր. Գալուստ և Սիմէօն վարդապետաց շնորհիւ, որք վասն վանուց և ժողո-

Վըրդեան լաւ համարեցին վշոտկրութեամբ մնալ անդէն և մեռանիլ, քան որպէս բաղդախնդիր ոմն զոհել ամենայն ինչ խարուսիկ փառաց և անգորութեան, որը մոռցնել կուտայ իրեն արժանավայել իրաւունքը: Չնայելով որ ի պաշտօնէ ևս հրամայուեցաւ իրեն (Գ. առաջնորդին) մինչ ցգեկտեմբեր թողնէ վաճքը իւր հանդերձ մնացեալ միաբանովք, փոխանակ նորա տալով նոցա Ս. Գեղարդայ այրից վաճքը իւրական կալուածովք և գնացեալ ժողովրդովէք, ույ բնակէ ի նմա. սակայն և այնպէս մերժեց այն հանդերձ միաբանութեամբ և ժողովրդովք մնալով անդէն զինչ Երեմիաս և ողբալով միշտ զերկիրս աւելի:

Ընդ քահանայից, տանուտեարց և ժողովրդեան աստի անդգաղթող նշանակիր գաւռառապետ մելիքք էին, զորս աստանօր յականէ յանուանէ կըլիշեմ: Պայազիտցի Արծրունեան աղա Մկրտիչ և Մարտիրոսեան աղա մելիքքն, Մանկասարցի Տէրդիկորեան աղա մելիք Գալուստն, Եօնջալուեցի Բօզօնեան մելիք Ղազարն, Վաղարշակերտցի Եղիկեան աղա մելիք Յակովըն, Մանաւազակերտեան Համան-փաշա գիւղացի Խաչատրեան աղա մելիք Ներսէսն, Դիատնցի մելիք Օսկանեան աղա մելիք Խաչատուր, Արծափեցի աղա մելիք Մանուկ Տէր Անգրիասեան... .

Այս տառապագին օրերէն ետև երկուստէք գերեաց թողութիւն շնորհուելով՝ վերադարձան ոմանք հետզհետէ իրենց հայրենիքը ընդ որս և Բահլուլ փաշայ, որն որ կրկին իւր նախորդիշխանութիւնն առած եկաւ ի Բայազիտ, ուր գատարկ գտաւ այդ չքնաղավայրունքը, մնացեալ սակաւ ինչ ժողովրդովք: Ճշմարիտն ասած եթէ նա վաղ հասած լինէր, թերեւս բազումքն ի նոցանէ յգաղթէին դիմելով այդ աշխարհաւեր միջոցին, վասն զի պաշտօնեայք ինչպէս ալ լինին, ունին մի դիւթիւ զօրութիւն, որը կըկասեցնէ իրենց հպատակազգաբնակութիւնքն՝ լինելով նեցուկ նոցա:

ԺԲ.

ԱՐՉԱԳԱՆՔ ԲԱԳԻՐԵԱՆԴԱՑ

ԵՂԵՐԵՐԳ.

Վաշ վաշ զի անկաւ պերճն իմ ապաստան,
 Սուգ հագեր Մասիս, Պայտազտոյ դուրսան,
 Վաշ վաշ զի պղտոր ջրերն անապակ,
 Լեղի են գարձեր կերակուրն ու հաց։
 Վաշ վաշ զի մթնած եթերն հայրենի,
 Խոցեսցի սլաք ի սիրտ քիւրտ ազգի։
 Ա-խ, Բնչպէս թողումք տուն տեղ համայն,
 Որ սպանայ մեզ թողուլ զամենայն։
 Հողմունք բքարեր անողորմ բաղդին,
 Արդ զրկեն զքեզ աստղէն հայրենի.
 Մայրիկ իմ մայրիկ, լսէ զիմ ձէնիկ.
 Աշերդ բաց արա, ա-խ, տես զիմ հալիկ։
 Քաջք կալան զքեզ թ' տուն Մորփէսօի
 Անկար, մնացիր ի նինջ մայրենի,
 Ո-հ, հերիք լացիր քնոյ մէջ թաղուած,
 Անտէր մնացիր, թափուր ի բնակչաց։
 Տես ինչպէս փախնին որդիքդ սարէ ձոր,
 Եերես գէպ օտարո, ա-խ մերկ ու տկլոր.
 Գոռացին ամպրոպք, երկիր եկաց լուռ,
 Երկինք բռնեցին հրեշտակունք հոյլ հոյլ։
 Զայն ետուն միմեանց երգեցին անդուլ,
 Լարել զքնար հայ արմենուհւոյն,
 Յորեաւ ու գոչեց կոյսն ողորմագին,
 Թեք ընկաւ բարձին վեր մասեաց սարին։
 — Ո՞ւր փախնիք, երթայք որդիք արտալած,
 — Ի՞նչ տեսնեմ երկրիս լաց, կո՞ծ, աւերա՞ծ.
 — Աստուած իմ, Աստուած թոյլ տուր ինձ խօսել,
 — Եւ ի ծոցո ազատ թոռունքս ժողովել։

- Ոլուկը սիրածած դարերով ծեծած,
 — Արդ ի միա առէք հին փառքս կորած.
 — Այն Հայկէն ի վեր ձեր դիւցազնը հօր.
 — Եւ տեղիք նորա, արքայից հզօր:
 — Որք ձեզ տուեցին աւանդ այս փառքեր,
 Տուն տեղ պահպանել ձեր բոլոր կայքեր.
 — Արդ նախանձ տան քո կերիցէ զքեզ,
 — Էնդ որ անկայ ես և ողբամ զձեզ:
 — Փոթորիկ Մ' ելաւ ամեն բան մթնեց,
 — Զորս կողմէն ամպեր գոռացին տարերք.
 — Երկինքէն իջաւ անիծից որդին,
 — Բոցաշունչ կայծակ զարկաւ յիմ լերդին:
 — Անձն իմ որդնալից դարձաւ Յոր արդի,
 — Զրկեցայ փառաց յիմ որդւոց նախնի,
 — Ամէն մարդ փութով ինձէն ուժացաւ.
 — Աւուր պարէնի կարօտ ես դարձայ:
 — Զդժրեմ, մոռնամ որ ուխոս առ Որէն,
 — Զձեզ յիշել, փրկել յամենայն չարէն.
 — Դարձարուք առ իս ասէ Ցէր Արքայ,
 — Ես դառնամ առ ձեզ տարակոյս չկայ:
 — Տեղափոխութիւն՝ ցաւը չի բուժեր,
 — Երթալով մաշի, ընկճի ձեր ոյժեր,
 — Պահեցէք ձեր տեղ գործեցէք յուսով,
 — Զեր կրօն, հաւատ դուք համայն ազգով:
 — Նուտով ես կենեմ, զձեզ կը տեսնեմ,
 — Ո՛չ այսպէս ստրուկք, այլ ազատ յիմ ծոց,
 — Կելնեմ կու տեսնեմ տունս զարդարուած
 — Զձեզ կընդունեմ, կուտամ հալալ պաշս:
 — Օ՛ն վազէք որդեակք յիմ գիրկս ազատ,
 — Անգութ օտարին խիստ դառն է հարուած.
 — Ալ մի վհատիք աշխարհս ոչինչ է,
 — Իինդ և ջանք կրկին սրւը փրկիչ է:

(Եպառանուիլը) Պ. Յ. ՄՈՒՐԱՏԵՍԱՆՑ.